Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30» հոկտեմբեր 2020թ. N Վ-30/57

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի նկարագրությունը, վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Ա. Օհանյանի կողմից 01.08.2016 թվականին հայտնաբերվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 154–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված վարչական իրավախախտում, մասնավորապես՝ քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Բագրատունյաց փողոցի 4-րդ նրբանցքի հ. 17/1 հասցեում ինքնակամ իրականացվել է քանդման և հիմքերի կառուցման շինարարական աշխատանքներ, որի վերաբերյալ 01.08.2016 վականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 023059 արձանագրությունը (հետայսու՝ արձանագրություն):

Որպես իրավախախտման փաստը հաստատող ապացույց, իրավախախտման հայտնաբերման պահին լուսանկարվել է իրավախախտման վայրը:

Հայտնաբերված իրավախախտման փաստով Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը քաղաքացի Մելսիդա Օհանյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից միջոցներ են ձեռնարկվել իրավախախտում կատարած անձին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստերի վերաբերյալ ծանուցելու համար, սակայն ծանուցագրերը չեն հանձնվել՝ վերջինիս չհայտնաբերելու պատճառով:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներով չեն կանոնակարգվում վարչական՝ այդ թվում նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների կասեցման դեպքերը, հիմքերն ու կարգը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով, 71-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 76-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (հետայսու՝ Օրենք) 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով 28.09.2016 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ հ. Վ–38/15 որոշմամբ 01.08.2016 թվականին քաղաքացի Մելսիդա Օհանյանի նկատմամբ կազմված հ. 023059 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների ուսումնասիրման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանին Երևանի քաղաքապետարանում կայանալիք նիստերին ծանուցելու համար, սակայն ծանուցագրերը հնարավոր չի եղել հանձնել վերջինիս չհայտնաբերելու պատճառով:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 23.11.2016 թվականի հ. Վ–46/17, 25.01.2017 թվականի հ. Վ-2/7, 29.03.2017 թվականի հ. Վ-11/4, 31.05.2017 թվականի հ. Վ-19/10, 02.08.2017 թվականի հ. Վ-28/12, 04.10.2017 թվականի հ. Վ-37/15, 06.12.2017 թվականի հ. Վ-46/17, 07.02.2018 թվականի հ. Վ-5/1, 04.04.2018 թվականի հ. Վ-13/3, 06.06.2018 թվականի հ. Վ-21/11, 08.08.2018 թվականի հ. Վ-30/14, 03.10.2018 թվականի հ. Վ-36/9, 14.11.2018 թվականի հ. Վ-42/30, 16.01.2019 թվականի հ. Վ-1/33, 20.03.2019 թվականի հ. Վ-10/20, 22.05.2019 թվականի հ. Վ-19/34, 26.07.2019 թվականի հ. Վ-28/69, 26.09.2019 թվականի հ. Վ-36/92, 14.11.2019 թվականի հ. Վ-43/36, 09.01.2020 թվականի հ. Վ-1/3, 04.03.2020 թվականի հ. Վ-9/43 , 29.04.2020 թվականի հ. Վ-17/4, 24.06.2020 թվականի հ. Վ-25/40 որոշումներով Մելսիդա Օհանյանի նկատմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսվել է:

Վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.11.2016 թվականի հ. Վ–47/15, 01.02.2017 թվականի հ. Վ-3/13, 05.04.2017 թվականի հ. Վ-12/5, 07.06.2017 թվականի հ. Վ-20/8, 09.08.2017 թվականի հ. Վ-29/11, 11.10.2017 թվականի հ. Վ-38/19 , 13.012.2017 թվականի հ. Վ-47/12, 14.02.2018 թվականի հ. Վ-6/6, 11.04.2018 թվականի հ. Վ-14/8, 13.06.2018 թվականի հ. Վ-22/13, 15.08.2018 թվականի հ. Վ-31/3, 10.10.2018 թվականի Վ-37/6, 21.11.2018 թվականի հ. Վ-43/12, 23.01.2019 թվականի հ. Վ-2/38, 27.03.2019 թվականի հ. Վ-11/25, 29.05.2019 թվականի հ. Վ-20/36, 32.07.2019 թվականի հ. Վ-29/30, 26.09.2019 թվականի հ. Վ-36/95, 14.11.2019 թվականի հ. Վ-43/39, 09.01.2020 թվականի հ. Վ-1/8, 04.03.2020 թվականի հ. Վ-9/46, 29.04.2020 թվականի հ. Վ-17/7, 24.06.2020 թվականի հ. Վ-25/43 որոշումներով

կասեցվել է 01.08.2016 թվականին քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանի նկատմամբ կազմված վարչական իրավախախտման վերաբերյալ հ. 023059 արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթը:

Վարչական իրավախախտման գործով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործի փաստական հանգամանքների քննարկմանը Մելսիդա Վալոդյայի Օհանյանի մասնակցությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից կրկին միջոցներ են ձեռնարկվել քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանին Երևանի քաղաքապետարանում 30.07.2020 թվականին կայանալիք գործի քննությանը ծանուցելու համար:

Քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանը ծանուցված լինելով 30.07.2020 թվականին կայանալիք գործի քննության տեղի և ժամանակի մասին չներկայացավ, ուստի Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործը քննվեց վերջինիս բացակայությամբ:

Գործի քննության ընթացքում՝ որպես մեկ համակցություն, հետազոտվեցին արձանագրությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի 30.08.2016 թվականի հ. 19/50428, 21.11.2016 թվականի հ. 19/44-50428, 07.02.2017 թվականի հ. 19/44-50428, 13.06.2017 թվականի հ. 19/44-50428 գրությունները, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի 26.09.2016 թվականի հ. 22/01-16/66141, 03.11.2016 թվականի հ. 22/01-16/74935, 13.01.2017 թվականի հ. 22/01-16/87490, 07.02.2017 թվականի հ. 19/44-50428 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի 28.09.2016 թվականի հ.51/44-50428հ, 24.10.2016 թվականի հ. 51/44-50428հ, 20.12.2016 թվականի հ. 51/44-50428հ, 21.08.2017 թվականի հ. 51/44-50428հ գրությունները, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի Դավթաշենի բաժանմունքի պետի 01.12.2016 թվականի հ. 34/1-1993 գրությունը, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնի պետի 26.05.2020 թվականի հ. 11/13279 գրությունը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 10.05.2017 թվականի հ. 22-33603 գրությունը, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 28.03.2018 թվականի հ. US26/03/2018-1-0225 տեղեկանքը և իրավախախտման լուսանկարը:

Գործի փաստական հանգամանքների և դրանում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում հիմնավորվեց, որ քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Բագրատունյաց փողոցի 4-րդ նրբանցքի հ. 17/1 հասցեում ինքնակամ իրականացվել է շինության երկաթբետոնե հիմքերի, սյուների, հեծանների կառուցման շինարարական աշխատանքներ: Իրականացված շինարարական աշխատանքներն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596 որոշմամբ սահմանված կարգի 4-րդ հավելվածի 1-ին ցանկի 2-րդ և 3-րդ բաժիններում նկարագրված շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներում:

Քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանի կողմից թույլ է տրվել Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում:

2. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումները.

Օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա) կետի համաձայն կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 154-րդ հոդվածի 1-ին մասով, Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, 3-րդ մասով, 219.1-րդ, 252-րդ, 281-րդ և 282-րդ հոդվածներով, Երևանի քաղաքապետի 14.02.2020 թվականի թիվ 460-Ա որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանի նկատմամբ 24.06.2020 թվականի հ. Վ-25/43 որոշմամբ կասեցվեած վարչական վարույթը վերսկսել:

2. Քաղաքացի Մելսիդա Վալոդյայի Օհանյանին Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

3. Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ կենտրոնական գանձապետարանի N 900015211239 հաշվեհամարին:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, իսկ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԱՄ ԱԲՈՎՅԱՆ